

գամանքներում բազմապատկւում են: Նրանք պէտք է լարեն բոլոր իրանց ոյժերը, եռանողը և խօսքով ու գործով ճգնեն համերաշխութեան գաղափարն ընդարձակ սփռել ազգութիւնների մէջ: Զը պիտի այժմեան թշուառութեան բոլոր մեղքը ձգել «շայթանի» վրայ և նստել անդորք: Բագուի գէպքերի մէջ ահագին գեր ունին մեղ շրջապատղ տգիտութիւնն ու խաւարը: Եթէ հայ և միւսուլման ամրուները լինէին աւելի քաղաքակրթուած, ոչ մի «շայթան», ոչ մի արաւաքին չար ոյժ չէր կարող նրանց գրգել եղրայրասպան կոր մղելու միմեանց դէմ: Կովկասը գեռ շատ է յետ մնացել քաղաքակրթութիւնից: Զը համեմատենք մեզ Ռուսիայի խորքերի կոյր խուժանի հետ և մեզ միսիթարենը, դարձնենք մեր հայեացքը գէպի աւելի լուսաւոր վայրեր, դէպի Եւրոպայի ժողովուրդները... Տարածենք լոյս և ուսում, ահա մեր լաւագոյն ապագայի յենարանների պլաստորը...

Լայնատարած Ռուսիայի միայն ծայրերը չեն խլրտում, այլ և կենդրոնը և բոլոր կողմերը: Ամենուրեք տիրում է կարգերի ակնյայտ քայլայում: Քիշինեւի սոսկալի նղեռնագործութիւնները այժմ տեղի ունեն շատ քաղաքներում: Մենք միջոց չունինք արձանագրելու այն բոլորը, ինչ-որ կատարում է ներկայումս ներքին Ռուսիայում:

Առաջ ենք բերում մի եղելութիւն, որ խիստ ընորոշ է ներկայ Ռուսիայի կացութեան համար:

Անցքը կատարուել է Կուրսկ քաղաքում, փետրուարի 12-ին: Այդ օրը անդական գիմնազիօնի աշակերտաները ժողով են կազմում դպրոցում իրանց դպրոցական ներքին խնդիրների մասին խորհրդակցելու: Ժողովը վերջանալուց յետոյ աշակերտները թուով 200 հոգի դիմում են դէպի սեմինարիա և կանանց գիմնազիօն, որ իրանց վճիռը յայտնեն այդ դպրոցների աշակերտներին: Աշակերտները, պատմում է „Ռյուշ“ լրագիրը, ընթանում էին քաղաքի գլւանաւոր փողոցով զոյգ զոյգ: Այս խաղաղ հանդիսի առջև կառօպվ գնում էր ոստիկանապետ Զարինը: Հետեւակ և ձիաւոր ոստիկաններն ու սարամնիկները հետևում էին աշակերտների խաղաղ հանդիսի ետևից: Յանկարծ, երբ հանդէսը մօտեցել էր օրիորդների գիմնազիօնին, ոստիկանապետը բոլորովին անսպասելի և առանց որևէ է առիթի բարձրածայն դոչում է: «Ճեծեցէք»: Սարամնիկները բաժանում են և յարձակւում են մտրակներով անպաշտպան մանուկների վրայ և սկսում անինայ ծեծել նրանց:

Սարաժնիկներին օգնութեան են հասնում խանութներից դուրս վաղող զղուաղները և նոյնպէս յարձակում են գիմանգիստների վրայ: Մանուկները թագնուում են մաղաղիններում և գաւիթներում, բայց այստեղից նրանց դուրս են քաշում և գանակոծում: Մի քանի ծնողներ տեսնում են, ինչպէս ծեծում են իրանց զաւակներին, բայց չեն կարողանում օգնել որպեսուե նրանց չեն թոյլ տալիս մերձենալ: Ռէալական դպրոցի աշակերտները, լուր ստանալով, թէ իրանց ընկերները ծեծում են, յարձակում են դէպի փողոց, բայց նրանք ևս ենթարկում են ծեծի:

«Բնդ.⁴ լրագիրը մի ականատեսի բերանով սոսկալի մանրամասնութիւններ է հաղորդում այդ քստմնելի տեսարանի մասին: Ոստիկանները 10, 11 և 12 տարեկան մանուկների մազերը քաշելով, ձգում են իրանց հաստ կօշիկների կը դրունդների տակ, կոխկոտում: Մէկի ոտներից մի զաղան բրոնում է և զլուխը զարնում սալայատակին: Միւսը ջարդուում է ձիաւոր ոստիկանների ձիերի սմբակների տակ, ժողովուրդը ականատես է, բայց չի կարող օգնել, ումանը արտասւում են, կանայք ուշաթափուում են, ծերերն անէծք կարդում: Մի քանի ականատես սպաներ անզօր կատաղութիւնից դունատուում են: Երեք գիմնազիստներ փախչում են կանանց գիմնազիօնի նախասենեակը, բայց գիմնազիօնի վարչութեան հրամանով ծառաները նրանց դուրս են քշում և գցում հրոսակների ձեռքը»:

Այս եղելութիւնը յուղում է ամբողջ քաղաքը: Նոյն օրը արտաքոյ կարգի նիստ է հրաւիրուում Քաղաքային Խորհրդարանում: Ներկայ է լինուում ահազին բազմութիւն: Պատմւում են մինեանցից սոսկալի տեսարաններ: Մի ծերունի հայր խելագարի պէս գոռում է: Կպարոններ, իմ մի որդին այս պահին Հեռաւոր Արևելքում արին է թափում իւր հայրենիքի համար ինչպէս զինուոր, իսկ միւսին այսօր ծեծել են ոստիկանները այնպէս սաստիկ, որ անշուշտ նա պիտի հաշմ դառնայ: Պարոններ, օգնեցէք»:

Բազմաթիւ ստորագրութիւններով Ներքին գործերի մինիստրին ուղարկուում է հետևեալ հեռագիրը.

«Փեարուարի 12-ին կուրսկ քաղաքում ոստիկանութիւնը տեղական ոստիկանապետի հրամանով, առանց նախազգուշացնելու, փողոցներում ծեծեց անպաշտպան երեխաներին, որ ուսանում են քաղաքիս միջնակարգ դպրոցներում: Մինչև հոգու խորք վրդովուած ոստիկանութեան այս գաղանային գործողութեամբ, մենք պահանջում ենք դատաստանական քննութիւն և ինդրում ենք ազատել բանտարկուած երեխաներին»:

Ականատեսների ստորագրութեամբ իսկոյն և եթ դատախազին ինդիր է արւում՝ քննութիւն նշանակել և յանցաւորաներին դատի ենթարկել: Նոյն օրը երեկոյեան փողոցներում պատերին կպցնում են նահանգպալետի մի ծանուցագիրը. որով ազգարարւում է քաղաքի բնակչութեանը, թէ ամեն մի ժողով կամ ցոյց փողոցներում արգելուած է: Բնակիչները պէտք է զգոյշ լինեն, կարգը չը խանգարեն նաև թոյլ չը տան իրանց որդիկերանց փողոց դուրս գալ: Հակառակ դէպօւմ նահանգպալետ յայտնում է, թէ գործ կը դրուին խիստ ոստիկանական միջոցներ...»

Քիմնապիհօնում և ոչալական դպրոցում պարագմունքները ընդհատուած են մինչև մարտի 7-ը: Թէ ինչ կը լինի այսուհետև—ոչ ոք չը գիտէ:

Նոյն օրը տեղական հասարակական ժողովարանի անդամները 100-ից աւելի ստորագրութեամբ յայտարարութիւն են տալիս, որ ժողովարանի անդամների շարքից դուրս բերուին ոստիկանապետ Զարինը և ոստիկանական պաշտօնեաներ Վէյլկէն, Մակարկիչը, Պուղանօվն և Բօլզօվը, որոնք անպաշտպան երեխաններին ծեծելով են ցոյց տուել իրանց քաջութիւնը...

Ահա բաւական ժամանակ է, որ Կովկասի մի ամբողջ վայրից գալիս են տխուր լուրեր, թէ երկրի ազգաբնակութիւնը յուղուած է: Մեր խօսքը Գուրիայի մասին է, որի ազգաբնակութեան թիւը հասնում է 100 հազարի: Լքագրները, հարկադրուած, շատ քիչ մանրամասութիւններ են հաղորդում այդ երկրի յուղման մասին, իսկ մասնաւոր լուրերը հակասում են միմեանց: Միայն պաշտօնական «Հավաքած»-ը տուեց մի քանի տեղեկութիւններ, որոնցից մենք իմացանք, թէ Գուրիացիների շարժումը վերջերս սկսել է քաղաքական բնաւորութիւն ստանալ:

Շարժման առաջն առնելու համար երկրիս կառավարչապետի պաշտօնակատար գեներալ Մալաման փետրուարի սկզբին ուղարկեց Գուրիայ գեներալ Ալիխանօվին զօրքով, յանձնելով նրան երկրի և քաղաքացիական իշխանութիւնը ժամանակաւոր Այս միջոցը հասարակութեան կողմից համարուեց խիստ և ոչ ցանկալի: Նորին գերազանցութիւն գեն. Մալամային ներկայացաւ մի առանձին պատգամաւորութիւն թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագումս իշխան Մելիքովի առաջնորդութեամբ և խնդրեց, որ նախ քան խիստ միջոցների դիմելը, գուրիացիների դրութիւնը քննուի: Այս նպատակով